

## #MyArmenianStory ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

### Ի՞նչ է #MyArmenianStory նախագիծը

«#MyArmenianStory»-ն Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական ինստիտուտի բանավոր պատմության նախագիծ է, որ հանրությունից հարցազրույցների միջոցով հավաքում ու գրանցում է հայերի կյանքերի պատմություններ: Ծրագրի նպատակն է՝ նպաստել անհատական պատմությունների արձանագրմանը, հավաքմանն ու վավերագրմանը և դրանք որպես ազգային պատմության մաս վերակազմելուն: Իմաստը ընտանեկան պատմություններ բացահայտելն ու գրանցելն է: Կարող եք սկսել որտեղից ուզեք՝ ձեր ծնողներից, ազգականներից, հարևաններից, ընկերներից և այլն: Բոլորի պատմություններն էլ հետաքրքիր են, ու դրանք միասին կազմում են հայոց պատմությունը: Դուք այս կերպ իմանում եք ձեր սեփական պատմությունը և միաժամանակ տարածում եք ձեր փորձառությունն ու գիտելիքը: #MyArmenianStory նախագիծը կստեղծի հայկական փորձառության ընդգրկումն ու խորությունն արտացոլող պաշարահիմք:

### Որքա՞ն են տևելու հարցազրույցները:

Հարցազրույցը կարող է տևել 45 րոպեից մինչև երկու ժամ և ավելի, սակայն ցանկացած տևողության հարցազրույց կընդունվի:

### Հարցազրույցները կարող ե՞ն լինել անգլերենից տարբեր լեզվով:

Այո, հարցազրույցը կարող է լինել նույնիսկ մի քանի լեզուներով: Հարցազրուցավարը և հարցազրույցի մասնակիցը կարող են խոսել իրենց հարմար ցանկացած լեզվով, ինչպես նաև բուն հարցազրույցի ընթացքում իրենց հայեցողությամբ անցնել այլ լեզվի:

### Եթե հարցազրույցն անգլերեն չէ, կամ կան անցումներ տարբեր լեզուների, ես պետք է թարգմանե՞մ:

Ո՛չ: Պետք չէ անհանգստանալ հարցազրույցի որևէ հատվածի թարգմանության առնչությամբ: Ընդունվում են հարցազրույցներ ցանկացած լեզվով կամ լեզուների ցանկացած համադրությամբ:

### Արդյո՞ք հարցազրուցավարը կամ հարցազրույց տվողը պետք է հայ լինեն:

Ո՛չ, սահմանափակումներ չկան: Ցանկացած անձ կարող է որևէ հայկական պատմության մասին հարցազրույց վարել կամ տալ #MyArmenianStory-ի համար:



**Հարցազրույցի մասնակիցը պե՞տք է լինի ընտանիքի անդամ կամ ազգական:**

Կարող եք հարցազրույց վերցնել յուրաքանչյուրից, ում պատմությունն ուզում եք իմանալ կամ սերունդների համար հետաքրքիր եք համարում: Բոլորից, այդ թվում նաև հարազատներից: Ընտանիքի անդամների կամ հարազատների հետ հարցազրույցի առավելությունն այն է, որ ինքներդ ավելին եք բացահայտելու սեփական պատմության մասին:

**Արդյո՞ք հարցազրույցի մասնակիցը պետք է հասարակությանը հայտնի անձ լինի:**

Ո՛չ, պարզապես նա պետք է իր պատմությունը հրապարակելու հարցում համաձայնություն տա: Բոլորի հիշողությունները մանկության, ներգաղթի կամ ծնողների ու պապիկների ներգաղթի մասին, համայնքում մեծանալը, քաղաքից քաղաք կամ երկրից երկիր տեղափոխվելը, աշխատանք ընտրելը, ընտանիք կազմելը՝ այս ամենն արժեքավոր է, հատկապես եթե ձեր պատմության մի մասն է:

**Արդյո՞ք այս նախագիծը միայն Մփյուռքում ծնված մարդկանց համար է:**

Ոչ: Այս նախագիծը բոլորի պատմությունները հավաքելու համար է՝ Մփյուռքում ծնվածների, Խորհրդային Հայաստանում մեծացածների, Խորհրդային Հայաստան հայրենադարձածների, ինչպես նաև այժմ Հայաստանի Հանրապետությունում ապրողների:

**Ի՞նչ կլինի, եթե ես ուզեմ հարցազրույց անցկացնել այնպիսի անձի հետ, որ կարծում է, թե հետաքրքիր ասելիք չունի:**

Եթե դուք հանդիպեք այդպիսի անձի, ապա դուք կարող եք առաջարկել, որ նա որպես սկիզբ ցույց տա իր կյանքի մի դրվագ հիշեցնող էական կամ անէական առարկա, որ գուցե փոխանցվել է սերնդե-սերունդ, երկրե-երկիր: Դա կարող է լինել գիրք, հանդես, լուսանկար կամ հուշանվեր, որ բորբոքում ու վերարծարծում է մի զգացողություն կամ առնչություն: Մա կարող է նրանց տրամադրել սկսելուն, ապա դուք կարող եք վերադառնալ հարցացույցին:

**Տարիքային սահմանափակում կա՞:**

Հարցազրույց կարող է տալ յուրաքանչյուր անձ 18 տարեկան եւ բարձր: Գուցե ավելի հետաքրքիր ու օգտակար կլինի հարցազրույց անել այնպիսի անձանց հետ, որ տարատեսակ փորձությունների միջով են անցել ու կարող են պատմել իրենց հուշերը:

**Հարցազրույցները պետք է իրականացվեն տեղո՞ւմ:**

Բոլոր հարցազրույցները կարող են իրականացվել տեղում կամ այնպիսի առցանց հարթակների միջոցով, ինչպիսիք են Zoom-ը կամ Skype-ը: Հարցազրույցներ ձայնագրելու վերաբերյալ ամբողջական ցուցումները կարող եք գտնել Ուղեցույցում:

**Ինչպե՞ս ենք փոխանցելու հարցազրույցները:**

Բոլոր հարցազրույցները կարող եք վերբեռնել USC հայագիտության ինստիտուտի կայք [armenian.usc.edu/myarmenianstory](http://armenian.usc.edu/myarmenianstory).

**Ո՞րն է կարճ և ընդլայնված հարցաշարերի տարբերությունը:**

Նրանք երկուսն էլ նույն թեմայի շուրջ են: Ընդլայնված ուղեցույցը առաջարկում է ավելի կոնկրետ և պատասխաններից բխող հարցեր: Կարող եք օգտագործել հարցաշարերից ցանկացածը կամ զուգակցել երկուսի մասերը: Ամենակարևորը՝ թող հարցազրույց վարողն ինքը որոշի, թե որ թեմաներն են ամենաէականը:

**Եթե նախընտրում եմ օգտագործել ընդլայնված հարցաշարը, կարո՞ղ եմ բաց թողնել կամ շրջանցել որոշ հարցեր:**

Կարող եք հարցաշարից օգտվել այնպես, ինչպես ցանկանաք: Ընդլայնված հարցաշարն ընդգրկում է տարատեսակ հնարավոր հենքերով հարցեր: Ընտրեք այն հարցերը, որ էական են հարցազրույց տվողի առնչությամբ:

**Հարցազրույցն անցկացնողը կարո՞ղ է զրույցում ընդգրկել Հարցաշարում չնշված հարցեր և անտեսել Հարցաշարի որոշ մասեր:**

Այո: Հարցազրույց վարողը պետք է հետևի զրուցակցի նախաձեռնությանը: Եթե որոշ հարցեր լինեն ոչ կիրառելի կամ ոչ հարմար, ապա դրանք կարող են անտեսվել: Եթե Հարցաշարում չընդգրկված թեմաներ ի հայտ գան, ապա հարցազրույց վարողը կարող է տալ իր սեփական հարցերը և շարունակել այդ ուղղությամբ:

**Ես ոչ մեկի հետ երբեք հարցազրույց չեմ վարել: Արդյո՞ք իրավասու եմ դա անելու:**

Հարցազրույցը նման է երկար և բովանդակալից զրույցի: Կարևորը հետաքրքրված լինելն է: Ձեր հետաքրքրասիրության և մեր ցուցումների միջոցով պատրաստ կլինեք անցկացնել ձեր առաջին հարցազրույցը: Հարցազրույցի ուղեցույցը պարունակում է հարցերի և ոլորտների ցանկ, որոնց շուրջ կարող եք զրուցել:

**Ո՞ւմ է պատկանելու հարցազրույցի օգտագործման իրավունքները՝ իմ տեսանյութը փոխանցելուց հետո:**

Տեսանյութը համալսարանի արխիվների մաս կկազմի և հասանելի կլինի հետազոտողների համար, իսկ օգտագործման իրավունքը կպատկանի Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտության ինստիտուտին: Սակայն դուք կպահպանեք ձեր կատարած ձայնագրության հեղինակային իրավունքը: Անպայման պատճենեք հարցազրույցը ձեզ ու ձեր ընտանիքի համար, քանի որ հետո պատճեն ստանալը կարող է երկարատև ու բարդ գործընթաց լինել:

**Ի՞նչ պետք է անել, եթե հարցազրույցն ընդհատվի:**

Ընդհատումները գործընթացի մի մասն են: Եթե ընդհատումը կարճ է և չի խանգարում ձայնագրությանը, պարզապես շարունակեք հարցազրույցը: Եթե ձայնագրությունն անջատվի, շարունակեք նոր ձայնագրությամբ և ստուգեք, որ երկու հոլովակներն էլ ճիշտ անվանում ունենան: Անվանման ցուցումները տե՛ս Ուղեցույցում:

**Ի՞նչ պետք է անել, եթե հարցազրույցի մասնակիցը հուզվի:**

Միանգամայն բնական է, որ մարդիկ իրենց կյանքի էական պահերը վերհիշելիս հուզվեն: Թողեք մի քիչ հանգստանան, ապա շարունակեք հարցազրույցը: Պետք չէ դադարեցնել ձայնագրությունը:

**Ի՞նչ անեմ, եթե հարցազրույց տվողը ներկայացնի մի փաստաթուղթ, լուսանկար կամ այլ հուշ-առարկա:**

Փաստաթղթերը, լուսանկարներն ու այլ հուշ-առարկաներ ցանկալի են, քանի որ դրանք հարցազրույցն ավելի առարկայական ու տեսանելի են դարձնում: Ծրեք (scan) կամ լուսանկարեք առարկան և ուղարկեք Ինստիտուտին կամ խնդրեք նախավճարված fedex ծրար և փոստով ուղարկեք այն:

**Ի՞նչ անել, եթե հարցազրույցն ինչ-ինչ պատճառներով ընդհատվի, ու ես ի վիճակի չլինեմ այն ավարտին հասցնելու: Կարո՞ղ եմ մասնակի հարցազրույցը փոխանցել:**

Այո: Բազմամաս հարցազրույցի ճշգրիտ անվանման համար ստուգեք Ուղեցույցը: Բայց հնարավորության դեպքում փորձեք վերջացնել այն: Գուցե մի ուրիշ օ՞ր:

**Կարո՞ղ է հարցազրույցին երրորդ անձ միանալ: Ի՞նչ կլինի, եթե ընտանիքի մի այլ անդամ միջամտի իր դիտարկմամբ կամ վիճարկի հարցազրույցի վերհուշը:**

Լավ կլինի, եթե ընտանիքի անդամին խնդրեք սպասել և առանձին հարցազրույց վարեք այդ մարդու հետ: Բոլորի պատմություններն էլ արժեքավոր են: Բայց երկուսին միաժամանակ տեսախցիկի կադրում տեղավորելը բարդ է, իսկ միաժամանակ խոսելը խառնաշփոթ կստեղծի: Դա կարելի է անել կա՛մ ձայնագրությունը դադարեցնելով, կա՛մ ձայնագրման ընթացքում:

**Ի՞նչ է անելու Հարավային Կալիֆոռնիայի համալսարանը իմ հարցազրույցը**

Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական ինստիտուտը հավաքելու, քարտազրելու և թվայնացնելով արխիվավորելու է հարցազրույցները, որ դրանք մատչելի լինեն հետազոտողներին որպես առաջնային աղբյուրներ:

**Որտե՞ղ պետք է տեղադրվի հարցազրույցների հավաքածուն:**

Հավաքածուն պետք է տեղադրվի Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական ինստիտուտի թվային արխիվում:

**Տեսագրություններն ու ձայնագրությունները հանրային ձևով առցանց հասանելի լինելու ե՞ն: Ո՞վ և ինչպե՞ս կկարողանա տեսնել իմ հարցազրույցը:**

Տեսագրություններն ու ձայնագրությունները հասանելի կլինեն այն մարդկանց, որոնք կդիմեն թվային արխիվ մուտքի իրավունքի համար: Դրանք համացանցում բաց հասանելի չեն լինի:

**Կա՞ն համաձայնագրեր, որոնք հարցազրույց տվողները պետք է ստորագրեն:**

Հարցազրույց տվողը պետք է բանավոր համաձայնություն տա հարցազրույցի ընթացքում: Այա հարցազրույցն անցկացնողը պիտի հաստատի համաձայնությունը առցանց տեղադրման ընթացքում:

**Հարցազրույց անցկացնողը կարո՞ղ է մեկից ավելի հարցազրույցներ վարել տարբեր մարդկանց հետ:**

Այո: